ՊԱՇՏՕՆԱԿԱՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԱՄԵՆԱՊԱՏԻՒ Տ. ՏԵՂԱԿԱԼԻ ՏՆՕՐԷՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ.

Յուլիս 1. № 1703 *Առաջադրուեց Թիֆլիզի Հայոց կոնսիստորիայի նախագահող Տ. Եփրեմ՝ եպիսկոպոսին, Մուկուզանի եկեղեցու շինութեան համար տեղեկութիւն տալ։*

Յուլիս 4. № 1708. *Մակագրութեամբ առաջադրուեց Մայր Աթոռի ժառանգաւորանապետ Տ. Մեսրոպ եպիսկոպոսին, Ս. Թադէոս առաքելոյ վանքի ձեռագրերը Ռուբէն Մկրտչեանի և Յակոբ Դուշակեանի գրութեան և ցուցակի համեմատ ստանալ և իւր կողմից ստացական տալ։*

Յուլիս 7. № 1709. *Առաջադրութիւն Ատրպատականի առաջնորդին, որի հետ և Պարսից կայսերական խնամակալի հեռագրի պատճէնը առ կաթուղիկոս տեղական, Ատրպատականի հայոց անդորրութեան համար արուած*

կարգադրութեան մասին, ի մասնաւորի՝ Ղարաբաղի և Մակուայ հայերի համար։

Յուլիս 7. № 1712։ Առաջադրութեամբ յայտնուեց Թիֆլիզի Հայոց կոնսիստորիայի նախագահող Տ. Եփրեմ եպիսկոպոսին, թէ քահանաները չեն կարող եկեղեցիների երեսփոխան լինել։

Յուլիս 7. № 1714, Առաջադրութեամբ թոյլ տրուեց Սարգսյանի հայոց թեմի առաջնորդին Զեռնովսկեան նահանգի Ադլեր աւանում բանալ միդասեան երկու սեռի եկեղ. ծխական դպրոց։

Յուլիս 7. № 1718. Առաջադրութեամբ յայտնուեց Տ. Արտակ վարդապետին, թէ նա իւր խնդրի համեմատ արձակուած է Ս. Էջմիածնի Մայր Տաճարի վերաշինութեան Յանձնաժողովի անդամութեան պաշտօնից։

Յուլիս 7. № 1718. Առաջադրութեամբ յայտնուեց Տ. Մատթէոս վարդապետին թէ նա կարգուել է Ս. Էջմիածնի Մայր տաճարի վերաշինութեան Յանձնաժողովի անդամ։

Յուլիս 7. № 0623. յայտնուեց Մայր Աթոռի տպարանի վարչութեան, թէ Տ. Արտակ վարդապետը իւր խնդրի համեմատ արձակուել է տպարանի տեսչի պաշտօնից և Տ. Մատթէոս վարդապետը կարգուել է նոյն տպարանի վարչութեան նախագահ։

Յուլիս 9. № 1729. Առաջադրութեամբ հրահանգութիւն տրուեց Ղարաբաղի Հայոց կոնսիստորիայի նախագահող Տ. Զաւէն վարդապետին Շուշուայ թեմական դպրանոցի հոգաբարձութեան ընտրութեան համար։

Յուլիս 9. № 1791. Առաջադրութեամբ հրահանգութիւն տրուեց Թիֆլիզի հայոց կոնսիստորիայի նախագահող Տ. Եփրեմ եպիսկոպոսին, թէ Վերայի եկեղեցին որպէս ծխական եկեղեցի կարող է ունենալ իւր ծխական քահանան և ընտրուած երեսփոխանը. իսկ գերեզմանատունը ուր թաղուում են Թիֆլիզի միւս եկեղեցիների

ծխական ննջեցեալներն էլ, պէտք է ունենայ ծխականներից անկախ վարչութիւն ինչպէս ունեցել է ցարդ և ունի այժմ։

Յուլիս 9, № 1732. 1733, Առաջադրուեց Թիֆլիզի Հայոց կոնսիստորիայի նախագահող Տ. Եփրեմ եպիսկոպոսին և Բաքուայ գործակալին Ղարադաղի կոզոպատուած և աւերուած հայ գիւղերի ժողովրդի համար ստանալ կամաւոր նուէրներ գրամով և նիւթեղէնով և ուղարկել Ատրպատականի հայոց թեմական խորհրդին կարօտեալներին բաշխելու։

Յուլիս 9. № 1733. Առաջադրուեց Սինոդին Մայր Աթոռի գանձարանից 200 ռ. ուղարկել Ատրպատականի հայոց թեմական խորհրդին՝ Ղարադաղի արկածեալ հայերին բաժանելու համար։

Յուլիս 12. № 1739. Առաջադրուեց Մայր Աթոռի մատենադարանապետ Տ. Մեսրոպ եպիսկոպոսին այցելել Սեան անապատը և այն տեղի ձեռագրերը բերել Մայր Աթոռ, և մատենադարանում նոյն անապատի անունով յատուկ գզրոցի մէջ ապահով ու խնամքով պահել։ (Նոյն մտքով և Սեանայ վանահայր Սարգիս եպիսկոպոսին ի կատարումն վերոգրեալ պատուիրանի)։

Յուլիս 12. № 1744. Առաջադրուեց Մայր Աթոռի Ճեմարանի վարչութեան գիշերօթիկ տաներից տահմանուած գրաւականը ստանալ, այն է, հարաւային կովկասցիներից՝ 50-ական ռուբլի, հեռաւոր տեղացիներից 75 ռուբ։

Յուլիս 14 № 2751. Ստացուեցաւ յանձնուեց Սինոդին Երուսաղէմի պատրիարքական Սրբազան Տեղապահի ուղարկած կնքուած ծրարը, որի մէջ են Հանգ. Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատեանի գոյքը։

Յուլիս 15. № 1751. Մակագրութեամբ յետ դարձուեց Տ. Եփրեմ եպիսկոպոսին Տփխիսի Մոշնեայ Ս. Գէորգ եկեղեցու ծխականների խնդիրը, պատուիրելով յայտնել խնդիրը ստորագրողներին թէ նրանք իրաւունք չունեն ըն-

Ծայացու առաջարկել Մուխրան գիւղի հայ ժողովրդի վերայ քահանայ ձեռնադրելու համար։

Յուլիս 15. № 1759. Կ. Պոլսոյ պատրիարքական Սրբ. Տեղապահին ուղարկուեց Ամերիկայի Հայոց Հովուութեանը ուղղուած այն գրութեան պատճէնը, որով ազդարարուած էր թէ, Տ. Մուշեղ եպիսկոպոսը, որպէս Սսոյ միաբան, չի կարող Ս. Էջմիածնի տէրունի թեմում առաջնորդ լինել։

Յուլիս 19 № 1760. Առաջադրուեց Սինոդին Մայր Աթոռոյս գանձարանից մի հազար ռուբլի ուղարկել Կ. Պոլսոյ պատրիարքարանին վերջին հրդեհի ժամանակ հրկիզութեամբ վառնդուած կարօտ հայերին ի նպաստ։

Յուլիս 21. № 1770. Առաջադրուեց Տ. Յուսիկ Արքեպիսկոպոսին աբեղայ ձեռնադրել Մայր Աթոռիս միաբան Աբէլ և Ռուբէն սարկաւագներին։

Յուլիս 21. № 1771-1774. Առաջադրուեց թեմական առաջնորդներին, ընդունելի համարել միայն ծխական կանոնադրութեամբ սահմանուած կանոնաւոր ժողովների արձանագրութիւնները, եթէ կազմուած են պատշաճ թոյլտուութեամբ ժողովներում։ Կանոնաւոր ժողովներից դուրս պատահական անձերի կազմած որ և է համախոհական ընդունելի պէտք է չլինի և չպէտք է վաւերացնել։

Յուլիս 22. № 1777. Առաջադրութեամբ հրահանգութիւն տրուեց Եմիսխուց առաջնորդ Տ. Անանիա արքեպիսկոպոսին պետական տորին-միգաւեան և երկգաւեան դպրոցներում կրօնի և հայոց լեզուի դասաւանդութեան վերաբերութեամբ։

Յուլիս 23. № 1778. Յոյանուեց Կ. պոլսոյ պատրիարքական Սրբազան Տեղապահին, թէ առաջադրուեց Սինոդին հեռագրով մի հազար ռուբլի փոխադրել պատրիարքարանին՝ հրդեհից վնասուած կարօտ հայերին նպաստ։

Յուլիս 23. № 1779. Մակուայ Սարդարին գրուեց

խնամք ունենալ իւր իշխանութեան մէջ եղած հայերի և վանքերի վերայ և Ս. Թադէոս առաքեալի վանքի պատճառով ամբաստանուած բանտարկեալներին արձակել որ կարողանան երկրային բերքերը հաւաքել։

(Այս մասին տեղեկութիւն տրուեց և Ատրպատականի առաջնորդին)։

Յուլիս 25. № 1782. Առաջադրութեամբ յայտնուեց Մինոգին թէ Յուլիսի 24-ին Մայր Աթոռի միաբան Աբէլ և Ռուբէն սարկաւագները աբեղայ են ձեռնադրուել Տ. Յուսիկ արքեպիսկոպոսից Ս. Գայիանէի վանքում, և պատուիրուեց՝ տալ սահմանուած ռոճիկը ըստ սովորութեան։

Յուլիս 27. № 1789. Մակադրութեամբ Ատրպատականի առաջնորդի յայտարարութեան վերայ պատուիրուեց Երևանայ կոնսիստորիային ա. յանձնարարել Հին-Նախիջևանի Հոգև. կառավարութեան, Յակոբը քհնյ. Տէր Մինասեանի՝ 67 և 40 կոպ. պարտքը առ Ս. Նախավկայի վանքը՝ ստանալ, և նոյն վանքի համար եղած ծախսերը գուրս գալուց յետոյ՝ մնացածը ուղարկել Ատրպատականի թեմ. Խորհրդին. բ. պատուիրել վերոյիշեալ Հոգևոր Կառավարութեանը Ս. Նախավկայի Ռուսաց սահմանում եղած կալուածքը վարձով տալ Ատրպատականի թեմական Խորհրդի գլխաւորութեամբ և նրա ներկայացուցչի մասնակցութեամբ և գ. կալուածքի վարձից պետական հարկը և այլ օրինական ծախքեր վճարելուց յետոյ մնացածը անխափան ուղարկել Ատրպատականի թեմական խորհրդին։ (Այս մասին տեղեկութիւններ տրուեց Ատրպատականի առաջնորդին)։

Յուլիս 30. № 1792. և 1793. Թուղթ Պարսկաստանի Հնդկաստանի, և Ատրպատականի առաջնորդների անուանով, որով առաջադրւում է յորդոր կարդալ իրանց հօտին սիրով և խաղաղութեամբ վարուել պարսիկ ժողովրդի հետ, հեռի մնալ քաղաքական հոսանքից և հաւատարիմ հպատակութիւն ցոյց տալ նրան, որին Պարսից պետութիւնը իւր օրինաւոր գլուխ կը ճանաչի։